

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Եսայան Վարդուշ Գեվորգի

**Տնօրինչականության սկզբունքը եվ տնօրինչական գործողությունները
քաղաքացիական դատավարությունում**

**ԺԲ.00.04 մասնագիտությամբ «Դատական իրավունք դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ
հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЕСАЯН ВАРДУШ ГЕВОРГОВНА

**ПРИНЦИП ДИСПОЗИТИВНОСТИ И РАСПОРЯДИТЕЛЬНЫЕ ДЕЙСТВИЯ В
ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ**

АВТОРЕФЕРАТ

**Диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности**

**12.00.04 - «Судебное право – судоустройство, гражданский процесс, уголовный
процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно –
розыскной деятельности»**

ЕРЕВАН 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում
Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Տ.Ե. Արուվա
իրավաբանական գիտությունների թեկնածու
Վ.Ս. Բեժանյան
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մարտի 25-ին՝ ժամը 14.30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. փետրվարի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук,
доцент С. Г. Мегрян
Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Т.Е. Абова
кандидат юридических наук В.С. Бежанян
Ведущая организация: Центр Конституционного права РА

Защита состоится 25-го марта 2015 г. в 14.30 часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 23-го февраля 2015 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, հռչակելով մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները որպես բարձրագույն արժեք, միաժամանակ երաշխավորում է խախտված իրավունքները վերականգնելու համար դատարան դիմելու, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, ինչպես նաև իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու անձի իրավունքները («Սահմանադրության 3, 18, 19 հհ.):

Հայաստանի Հանրապետությունն անկախությանը հաջորդած առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ դատաիրավական բարեփոխումների իրականացմանը ձգտելով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության և ազատական տնտեսության կայացմանը: Ընդ որում, համընդհանուր ճանաչում գտավ այն մոտեցումը, որ նշված նպատակին հասնելու կարևորագույն գրավականներից և նախապայմաններից մեկը մասնավոր հարաբերությունների ազատականացումն է և քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում թույլատրվական մեթոդի հնարավորինս լայն կիրառումը:

Քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորման մեթոդների փոփոխությունը չէր կարող չանդրադառնալ քաղաքացիադատավարական օրենսդրության վրա, որի նորմերը կոչված են ապահովելու նյութական իրավունքի նորմերով սահմանված իրավունքների պաշտպանության գործուն միջոցները և կառուցակարգերը: Որպես հետևանք, Հայաստանի Հանրապետության 1998 թվականին ընդունված քաղաքացիական դատավարության օրենսգրքի շրջանակներում զգալի նշանակություն տրվեց գործին մասնակցող անձանց հայեցողությանը և նախաձեռնությանը, վարույթի զարգացման, ուղղվածության և դադարման վրա ազդելու, նյութական իրավունքները և դրանց պաշտպանության դատավարական միջոցները վարույթի ընթացքում տնօրինելու հնարավորությունների ընդլայնմանը և տնօրինչական դատավարական գործողությունների կատարմանը դատարանի միջամտությունը հնարավորինս նվազեցնելուն, որն իր հերթին հանգեցրեց դատավարական հարաբերությունների իրավական կարգավորման մեջ դիսպոզիտիվ մեթոդների կշիռն ավելացնելուն:

Դիսպոզիտիվությունն ընդհանուր իրավական կատեգորիա է, որի սոցիալական բովանդակությունը դրսևորվում է իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքներն իրականացնելու և դրանք տնօրինելու ազատության մեջ:

Դատավարագիտության մեջ այն մարմնավորվում է տնօրինչականության սկզբունքում, որի դերը և նշանակությունը ներկայումս որևէ մեկի կողմից չի վիճարկվում: Այդուհանդերձ, եթե տնօրինչականության սկզբունքի տեղը քաղաքացիական դատավարության սկզբունքների համակարգում գիտական բանավեճերի տեղիք չի տալիս, ապա դրա էությանը, բովանդակությանը, իրավական բնույթին և սահմաններին վերաբերող հիմնախնդիրների շուրջ համընդհանուր մոտեցում չի ձևավորվել:

Համընդհանուր ճանաչում գտած տեսակետների բացակայության պայմաններում հաճախ որպես տնօրինչական գործողություններ են դիտարկվում դիսպոզիտիվության այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են հայց (դիմում), հակընդդեմ հայց, դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելը, հայցի ապահովման միջոցների կիրառում պահանջելը և այլն, ինչպես նաև այլ դատավարական իրավունք-

ները (հիմնականում մրցակցային) կատարելուն ուղղված գործողությունները:

Բանավեճային տեսական հարցերի բազմաթիվության պայմաններում առանց վարանելու կարելի է ասել, որ դրանց հետազոտումը Հայաստանի Հանրապետությունում վերջին երկու տասնամյակների ընթացքում տեղի ունեցած սոցիալտնտեսական և դատաիրավական փոփոխությունների լույսի ներքո չափազանց արդիական է:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն ուսումնասիրության առարկա հանդիսացող տնօրինչականության և տնօրինչական գործողություններին վերաբերող հարցերի կարևոր տեսական ու գործնական նշանակությամբ, այլ նաև գործող քաղաքացիական դատավարական օրենսդրության մեջ կատարված և նշմարվող փոփոխություններն իմաստավորելու, դրանք հնարավորինս խորը և բազմակողմանի վերլուծության ենթարկելու և օրենսդրության հետագա զարգացման ուղիների մշակման փորձ կատարելու անհրաժեշտությամբ:

Թեմայի մշակվածության աստիճանը և հետազոտության տեսական հիմքը: Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի և տնօրինչական գործողությունների հետ կապված որոշ հարցեր հետազոտության են ենթարկվել ինչպես Ցարական Ռուսաստանի, այնպես էլ խորհրդային և ժամանակակից ցիվիլիստներ և դատավարագետներ Ե.Վ. Վասկովսկու, Վ.Ա. Ռյազանովսկու, Գ.Ֆ. Շերշենևիչի, Կ.Ս. Յուդելսոնի, Ս.Ն. Բրատուսի, Վ.Պ. Գրիբանովի, Վ.Ս. Սենյոնովի, Մ.Ա. Գուրվիչի, Ռ.Ե. Ղուկասյանի, Ա.Տ. Բոների, Տ.Վ. Սախնովայի, Վ.Ս. Ժուկովի, Ի.Ս. Պյատիլետովի, Ա.Գ. Պլեշանովի, Վ.Ֆ. Յակովլևի, Մ.Կ. Տրեուշնիկովի, Գ.Լ. Օսոկինայի, Վ.Վ. Յարկովի, հայ հեղինակներից Ռ.Գ. Պետրոսյանի, Տ.Կ. Բարսեղյանի, Ս.Գ. Մեղրյանի, Վ.Վ. Հովհաննիսյանի, Ա.Հ. Դավթյանի, Գ.Մ. Արզումանյանի բազմաթիվ գիտական աշխատություններում, որոնք անխուսափելիորեն ուսումնասիրվել և ամփոփվել են հեղինակի կողմից սույն ատենախոսության շրջանակներում առաջադրված խնդիրների լուծման նպատակով:

Հետազոտության տեսական հիմքում դրվել են նաև հետազոտության թեմային ուղղակիորեն նվիրված մի շարք թեկնածուական ատենախոսություններ, որոնց շարքում աչքի են ընկնում Վ.Ֆ. Տարանենկոյի (1990 թ.), Ա.Գ. Պլեշանովի (2001 թ.), Ս.Վ. Մոխսեկի (2001 թ.), Ե.Ռ. Ռուսինովայի (2003 թ.), Ս.Ա. Սապոժնիկովի (2006 թ.), Տ.Վ. Յարոշենկոյի (2006 թ.) և Ս.Ե. Կոստինայի (2007 թ.) աշխատությունները:

Զնայած շարադրվածին, հարկ է նկատել, որ տնօրինչականության սկզբունքի և դրա կարևորագույն դրսևորումներ հանդիսացող տնօրինչական գործողությունների հասկացության, հատկանիշների, դատավարական և հնարավոր նյութաիրավական հետևանքների, կատարման դատավարական կարգի ու այդ գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության հարցերը հայ իրականության մեջ դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն, բացակայում են դրանց վերաբերյալ համընդգրկուն գիտական աշխատություններ՝ ատենախոսություններ, մենագրություններ, չեն հրապարակվել նույնիսկ գիտական հոդվածներ: Տվյալ հանգամանքը, իր հերթին, մեծապես կանխորոշել է ոչ միայն հետազոտության թեմայի ընտրությունը, այլ նաև դրա առարկան, հեղինակի նպատակն ու իր առջև դրված խնդիրները:

Հետազոտության առարկան: Ատենախոսության շրջանակներում որպես հետազոտության առարկա հանդես են գալիս քաղաքացիական դատավարությունում կողմերի տնօրինչական գործողությունները, ինչպես նաև դրանց կատարման հիմք հանդիսացող տնօրինչականության սկզբունքը: Հեղինակի կողմից հետազոտվում են կողմերի տնօրինչական դատավարական իրավունքները, դրանց հասկացությունն ու իրավական բնույթը, կազմը, բովանդակու-

թյունը, տնօրինչական գործողությունների իրականացման հետ կապված գործնական հարցերը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետության ժամանակակից սոցիալ-իրավական պայմաններում տնօրինչականության սկզբունքի իրացման և քաղաքացիական դատավարությունում տնօրինչական գործողությունների կատարման հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումն է:

Նշված նպատակին հասնելու համար սույն ատենախոսության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և ամփոփել տնօրինչականության սկզբունքի էության վերաբերյալ դատավարագիտության մեջ ձևավորված հիմնական տեսությունները՝ վեր հանելով քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի ժամանակակից ընկալումը, դրա դերն ու նշանակությունը.

2. վերլուծել տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը և ձևակերպել դրա հասկացությունը.

3. ուսումնասիրելով և ամփոփելով դատավարագիտության մեջ առանձին տնօրինչական գործողություններին տրվող բնորոշումները՝ վեր հանել դրանց հատկանիշները և ձևակերպել դրանց հասկացությունը.

4. առանձին-առանձին ուսումնասիրել տնօրինչական գործողությունների կատարման և ձևակերպման գործող դատավարական կարգը, վերջինիս կիրառման դատական պրակտիկան, տնօրինչական գործողությունների կատարման դատավարական և նյութաիրավական հետևանքները.

5. կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել կողմերի տնօրինչական գործողությունները և դրանց կատարման հետևանքները կարգավորող քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործմանն ուղղված առաջարկներ՝ այդպիսով նպաստելով տնօրինչականության սկզբունքի և դրան առնչվող ինստիտուտների հետագա զարգացմանը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել տնօրինչական գործողությունների կատարմանն ու դատավարական ձևակերպմանն առնչվող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանների նախադեպային ակտերը, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների վճիռները: Հետազոտությունը կատարելիս ուսումնասիրվել են նաև որոշ դատական գործերի արխիվային նյութերը, ինչպես նաև դատական վիճակագրության պաշտոնական տվյալները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության կոնկրետ նպատակով ու խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատաիրավական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս համալիր և բազմակողմանի վերլուծվել է տնօրինչականության քաղաքացիադատավարական սկզբունքի էությունը, բովանդակությունը, տնօրինչական իրավունքների

էութիւնն ու տեղը կողմերի դատավարական իրավունքների համակարգում, տնօրինչական գործողություններ կատարելու հետ կապված ինստիտուտները՝ հաշվի առնելով ինչպես դատավարագիտության մեջ հանդիպող հայեցակետերը, այնպես էլ ձևավորված իրավակիրառ պրակտիկան: Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա ատենախոսության շրջանակներում կատարվում են տեսական եզրահանգումներ, առաջարկվում են գիտության մեջ և դատական պրակտիկայում ծագած մի շարք բանավեճային հարցերի լուծումներ, նշնարվում են կողմերի տնօրինչական գործողությունները կարգավորող քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործման ուղիներ:

Ատենախոսության գիտական նորույթն ակնհայտորեն դրսևորվում է հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Տնօրինչականության դատավարական սկզբունքի էության և բովանդակության վերաբերյալ քաղաքացիական դատավարագիտության մեջ ձևավորված տեսությունների և դիրքորոշումների ուսումնասիրության և ամփոփման, ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության առանձին նորմերի համադրված վերլուծության հիման վրա առաջարկվում է տնօրինչականության սկզբունքը բնորոշել որպես քաղաքացիական դատավարության հիմնարար ու ղեկավար դրույթ, որի ուժով օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանի գործունեությունը պայմանավորված է տվյալ գործի ելքում իրավաբանական շահ ունեցող անձանց նախաձեռնությամբ և կամահայտնությամբ կատարվող գործողություններով, և որը գործին մասնակցող անձանց հնարավորություն է ընձեռում վարույթի ընթացքում որոշելու դատական պաշտպանության առարկան և ազդելու դատավարության ընթացքի ու դրա ուղղվածության վրա: Հիմնված լինելով սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի անարգել իրականացման և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու սահմանադրական իրավունքների վրա՝ տնօրինչականության սկզբունքը կողմերի համար ապահովում է վարույթի ընթացքում խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել արդյունավետ եղանակներ ընտրելու կամ դրանց դատական պաշտպանությունից ընդհանրապես հրաժարվելու հնարավորություն:

2. Չբացառելով դատավարության ընթացքում տնօրինչական գործողությունների կատարման արդյունքում նյութական իրավունքների տնօրինելու հնարավորությունը, կարծիք է արտահայտվում, որ դատավարության տնօրինչականության տեսանկյունից գերակայող նշանակություն ունի այն դատավարական իրավունքների իրականացումը, որոնց իրացումը հանգեցնում է դատական պաշտպանության իրավունքի և պաշտպանության հայցային միջոցների տնօրինման: Քաղաքացիական դատավարության իրավունքի տնօրինչականության սկզբունքը վերաբերում է բացառապես իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի և դրանց պաշտպանության միջոցների տնօրինման հնարավորությանը: Ինչ վերաբերում է նյութական իրավունքների տնօրինմանը, ապա այն ունի ինքնուրույն բնույթ, հանդիսանալով նյութական իրավունքի տնօրինչականության սկզբունքի դրսևորում, որևէ կերպ չի կարող անդրադառնալ դատավարության վրա, եթե չի ստանում համապատասխան դատավարական ձև:

3. Առանձին տնօրինչական գործողությունների հատկանիշները վերհանելու և ընդհանրացնելու հիման վրա առաջարկվում է որպես տնօրինչական դիտարկել կողմերի այն դատավարական գործողությունները, որոնց կատարմամբ գործին

մասնակցող անձը տվյալ վարույթի շրջանակներում սեփական հայեցողությամբ և անվերապահորեն տնօրինում է իր ենթադրյալ սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի դատական պաշտպանության իրավունքը՝ կանխորոշելով տվյալ գործով վարույթի ընթացքը և ուղղվածությունը: Հիմնավորվում է, որ այդպիսի գործողությունների թվին են դասվում բացառապես հայցից հրաժարվելը, հայցն ընդունելը, հայցի առարկան կամ հիմքը փոխելը, հայցապահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, հաշտության համաձայնություն կնքելը:

4. Հայցից հրաժարվելու և հայցն ընդունելու ինստիտուտների ուսումնասիրության և համակողմանի վերլուծության հիման վրա հիմնավորվում է այն տեսակետը, որ տվյալ տնօրինչական գործողությունների նկատմամբ նպատակահարմար է վերականգնել ՀՀ 1964թ. ՔԴՕ-ով նախատեսված դատական վերահսկողությունը: Տվյալ դատավարական գործողությունները պետք է կատարվեն գործը քննող դատարանի հսկողության ներքո, որը չպետք է ընդունի հայցվորի հրաժարումը հայցից կամ պատասխանողի կողմից հայցի ընդունումը, եթե համապատասխան դատավարական գործողության կատարումը հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձի իրավունքներն ու օրինական շահերը, կամ հիմքեր կան կասկածելու, որ տվյալ դատավարական գործողությունը կատարվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո:

5. Տեսակետ է արտահայտվել առ այն, որ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ հարկ է նախատեսել դատախազի, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց հարուցելու իրավունք ունեցող անձանց և օրինական ներկայացուցիչների կողմից հայցից հրաժարվելու, իսկ օրինական ներկայացուցիչների կողմից նաև հայցն ընդունելու իրավունքների իրականացման որոշակի սահմանափակումներ, որոնք ուղղված կլինեն համապատասխանաբար հանրային շահի կամ այն անձանց շահերի պաշտպանությանը, որոնք զրկված են իրենց շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից:

6. Հայցի էության և դրա տարրերի մասին հիմնական տեսությունների, հայցի փոփոխման ինստիտուտին վերաբերող տեսակետների ու իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության և համակողմանի վերլուծության հիման վրա առաջարկվում է հայցը փոփոխելու իրավունքը դիտարկել որպես հայցի իրավունք հասկացության բովանդակային տարր:

Հիմնավորվում է, որ հայցի առարկայի փոփոխություն պետք է համարել հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող նյութաիրավական պահանջի (հայցապահանջի) այնպիսի փոփոխությունը, որի արդյունքում իրավունքի պաշտպանության սկզբնապես հայցված եղանակները փոխարինվում են այլ եղանակներով կամ ճշգրտվում է սկզբնապես հայցված եղանակների շրջանակը՝ դրանք ավելացնելով կամ պակասեցնելով: Նման փոփոխության արդյունքում, թեև տեղի է ունենում հայցի որակական փոփոխություն, չի կարող փոփոխվել այն սուբյեկտիվ իրավունքը, որի պաշտպանության նպատակով հայցվորը դիմել է դատարան: Հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող նյութաիրավական պահանջի (հայցապահանջի) հիմքում սկզբնապես դրված փաստական հանգամանքներն այլ հանգամանքներով փոխարինելը կամ ճշգրտելն է՝ լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

7. Կարծիք է հայտնվել, որ, եթե դատարան դիմած սուբյեկտի (հայցվորի) կարծիքով հայցի բոլոր տարրերի փոփոխումն անհրաժեշտ է իր սուբյեկտիվ իրավունքի (շահի) պաշտպանության նպատակով հարուցված հայցն առավել արդյունավետ դարձնելու համար, տնօրինչականության սկզբունքի, արդարադատության շահի և դատավարական խնայողության տեսանկյունից օրենքը չպետք է անխտիր

բոլոր դեպքերում արգելի հայցի տարրերի միաժամանակյա փոփոխությունը: Նման մոտեցումը համահունչ է ՀՀ սահմանադրության 19-րդ, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներին, որոնք սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը: Հաշվի առնելով նաև այն իրողությունը, որ հայցի առարկայի փոփոխությունը հաճախ անխուսափելիորեն բերում է հայցի հիմքի փոփոխության, հիմնավորվել է հայցի առարկա և հիմքը միաժամանակ փոփոխելու հնարավորությունը նախատեսելու անհրաժեշտությունը՝ պայմանով, որ նման փոփոխության արդյունքում չի փոխարինվում այն սուբյեկտիվ իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով սկզբնական հայցը հարուցվել է:

8. Հաշտության համաձայնության ինստիտուտի և դրա կիրառման դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով հաշտության համաձայնությունը բնորոշվում է որպես գործին մասնակցող անձանց միջև կնքվող և դատարանի կողմից հաստատվող պայմանագիր, որն ուղղված է փոխադարձ զիջումների և կողմերի անվիճելի իրավունքներն ու պարտականությունները սահմանելու ճանապարհով վեճը լուծելուն և գործի վարույթը կարճելուն: Ի տարբերություն այլ տնօրինչական գործողությունների, հաշտության համաձայնության կնքումը և հաստատումը դիտարկվում է որպես ցանկացած դեպքում նաև նյութաիրավական հետևանքներ առաջացնող դատավարական գործողություն: Ընդ որում, հիմնավորվում է, որ հաշտության համաձայնությունը կարող է կնքվել վիճելի իրավահարաբերության սահմաններում: Դրա սահմաններից դուրս գալու միակ թույլատրելի եղանակը պարտավորության նորացումն է, բացառությամբ այն դեպքերի, երբ այն արգելված է օրենքով կամ դատարանի կողմից հաստատելու դեպքում կարող են խախտվել գործերի ենթակայության մասին կանոնները:

9. Կարծիք է արտահայտվում, որ հաշտության համաձայնության որոշակիության և անպայմանականության պահանջների խախտումները ճիշտ կլինի օրենսդրորեն դիտարկել որպես կնքված հաշտությունը դատարանի կողմից չհաստատելու հիմք: Իրավական անորոշությունը բացառելու նկատառումներից ելնելով՝ դատարանն իր ակտով պետք է հաստատի բացառապես այնպիսի հաշտության համաձայնություն, որը որոշակիորեն սահմանում է կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների շրջանակը և վերջիններիս կատարման հստակ եղանակն ու կարգը, ինչպես նաև չի պարունակում պայմաններ, որոնցից կախման մեջ է դրվում մյուս կողմի պարտականությունների կատարումը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է հայ իրավագիտության մեջ տնօրինչականության քաղաքացիադատավարական սկզբունքի և դրա գործողության առանձին դրսևորումներ հանդիսացող տնօրինչական գործողությունների ուսումնասիրությանը նվիրված անդրանիկ համալիր աշխատանքը, որը կարող է օգտագործվել թեմայի և դրան առնչվող մի շարք հիմնախնդիրների հետագա գիտական հետազոտություններում, բուհերի ու հատուկ դպրոցների ունկնդիրներին քաղաքացիական դատավարություն և մի շարք հատուկ դասընթացներ դասավանդելու, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ պատրաստելու ընթացքում:

Թեմայի շրջանակներում ներառված հիմնախնդիրների առնչությամբ կատար-

ված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը և օգտակար լինել օրենքների միատեսակ կիրառմանն ուղղված նախադեպային ակտերի մշակման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում, որտեղ տեղի են ունեցել դրա քննարկումները և երաշխավորումը պաշտպանության: Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, դրանցում ընդգրկված թվով վեց պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ինչպես նաև ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Տնօրինչականության սկզբունքը և տնօրինչական իրավունքները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության էությունը: Տնօրինչականության մասին հիմնական տեսությունները» վերտառությամբ, քննարկվում և վեր են հանվում տնօրինչականության քաղաքացիադատավարական սկզբունքի էության վերաբերյալ առկա մի շարք մոտեցումներ:

Դատավարագիտության մեջ ձևավորված տեսությունների համադրման, դատավարական գրականության մեջ տնօրինչականության էության վերաբերյալ արտահայտված տեսակետների վերլուծության հիման վրա հեղինակը գալիս է եզրահանգման, որ ժամանակակից քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքը հարկ է դիտարկել որպես «տնօրինման» և «դինամիկ» տեսությունների հիմնարար գաղափարների զուգորդմամբ, այն բնորոշելով որպես քաղաքացիական դատավարության հիմնարար ու ղեկավար դրույթ, որի ուժով օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանի գործունեությունը պայմանավորված է տվյալ գործի ելքում իրավաբանական շահ ունեցող անձանց նախաձեռնությամբ և կամահայտնությամբ կատարվող գործողություններով, և որը գործին մասնակցող անձանց հնարավորություն է ընձեռում վարույթի ընթացքում որոշելու (տնօրինելու) դատական պաշտպանության առարկան և ազդելու դատավարության ընթացքի ու դրա ուղղվածության վրա:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Տնօրինչականության սկզբունքի բո-

վանդակությունը. տնօրինչական դատավարական իրավունքներ» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը կազմող տնօրինչական դատավարական իրավունքները: Տվյալ դեպքում խոսքը գործին մասնակցող անձանց այնպիսի դատավարական իրավունքների մասին է, որոնց իրականացման միջոցով կոնկրետ քաղաքացիական գործով ուղղորդվում է դատական գործունեությունը: Այս առումով հեղինակը լիովին կիսում է Ս.Ա. Սապոժնիկովի այն կարծիքը, ըստ որի քանի որ տնօրինչականությունն արտահայտում է դատական պաշտպանության կախվածությունը գործով շահագրգիռ անձանց կամահայտնությունից, տվյալ սկզբունքի բովանդակությունը կարող են բնութագրել բացառապես այնպիսի իրավական կապերը, որոնց շրջանակներում գործին մասնակցող անձը հանդես է գալիս որպես իրավագոր, իսկ դատարանը՝ պարտավոր անձ:

Ամենևին չբացառելով դատավարության ընթացքում վիճելի նյութական իրավունքների տնօրինման հնարավորությունը, հեղինակի կարծիքով քաղաքացիական դատավարության իրավունքի տնօրինչականության սկզբունքը վերաբերում է բացառապես իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի և դրանց պաշտպանության միջոցների տնօրինման հնարավորությանը:

Մի խումբ հեղինակներ, որոնք տնօրինչականության սկզբունքի ակունքները կապում են նյութական իրավունքի հետ, կարծում են, որ տնօրինչականության սկզբունքը բնորոշ է միայն այն իրավունքներին, որոնց հիմքում ընկած է կապը նյութաիրավական հարաբերությունների հետ: Տվյալ մոտեցումը դատավարական հարաբերությունների իրավական կարգավորման ներկայիս պայմաններում որոշակի առարկությունների տեղիք է տալիս: Գործող դատավարական օրենսդրությունը նախատեսում է մի շարք դատավարական իրավունքներ, որոնց իրականացումից հրաժարվելը (չիրականացնելը) թեկուզև անուղղակիորեն (վճռի միջոցով) կարող է ազդել գործին մասնակցող անձի նյութական իրավունքների և պարտականությունների վրա:

Մեկ այլ խումբ հեղինակների կարծիքով, որոնց տեսակետը կիսում է նաև աշխատանքի հեղինակը տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը ներառում է այն դատավարական իրավունքները, որոնք թույլ են տալիս որոշել դատական պաշտպանության առարկան և ազդել դատավարության ուղղվածության ու ընթացքի (փուլից փուլ անցնելու և դադարելու) վրա: Այդպիսի իրավունքներ են հանդիսանում՝ 1) հայցից հրաժարվելը, 2) հայցն ընդունելը, 3) հայցը փոփոխելը (ներառյալ հայցի առարկան կամ հիմքը փոփոխելը, հայցապահանջների չափը ավելացնելը կամ նվազեցնելը), 4) հաշտության համաձայնություն կնքելը:

Շատ դատավարագետներ տնօրինչական դատավարական իրավունքների թվին են դասում նաև դատարան հայց (դիմում) ներկայացնելը, ինչպես նաև դատական ակտերը բողոքարկելու իրավունքը: Սակայն այն տնօրինչական իրավունք համարվել չի կարող, առաջին հերթին, այն պատճառով, որ, դատարան դիմելով, անձն իր դատավարական որևէ իրավունք չի տնօրինում:

Երկրորդ գլուխը՝ «Տնօրինչական գործողությունները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Հայցից հրաժարվելը» վերտառությամբ, ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում հայցից հրաժարվելու դատավարական գործողության հատկանիշները, դրանց դատավարական կարգն ու հետևանքները:

Քննելով քաղաքացիական գործը, դատարանը, որպես կանոն, կայացնում է

վճիռ, որն էլ լուծում է սուբյեկտիվ իրավունքի շուրջը եղած վեճը, սակայն գործնականում ծագում են իրավիճակներ, երբ տվյալ գործով հայց ներկայացրած անձի մոտ վերանում է հայցով վարույթը շարունակելու անհրաժեշտությունը (շահը):

Հայցից հրաժարվելու վերաբերյալ դատավարագետների մի շարք մոտեցումների համադրված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու հայցից հրաժարվելու դատավարական գործողության երկու հատկանիշներ: Այդպիսիք են՝ հայցից հրաժարվելը հայցվորի միակողմանի կամահայտնությունն է, այն միշտ ուղղված է քաղաքացիական գործի դադարեցմանը (վարույթի կարճմանը):

Նկատի ունենալով, որ հայցից հրաժարվելը ենթադրում է հայցվորի կամահայտնության հստակ նպատակային ուղղվածություն, կարծիք է արտահայտվել, որ դատարանի վրա պետք է օրենքով ուղղակիորեն դրվի պարտականություն՝ պարզելու հայտարարված պահանջներին կամ դրանց մի մասից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն անող կամ նախապես գրավոր դիմում (միջնորդություն) ներկայացրած հայցվորի իրական մտադրությունը:

Հայցից հրաժարվելու դատավարական գործողության անվերապահ (անպայմանական) բնույթը ևս, պետք է դիտարկվի որպես պարտադիր հատկանիշ: Այն թույլ է տալիս հայցից հրաժարվելը սահմանազատել այնպիսի տնօրինչական գործողությունից, ինչպիսին հաշտության համաձայնությունն է: Կարծիք է արտահայտվել, որ գործող ՔԴՕ-ում նպատակահարմար կլինի սահմանել, որ պայմանով հայցից հրաժարվելը չի թույլատրվում և դատարանի կողմից չի ընդունվում:

Շատ դատավարագետներ հայցից հրաժարվելու դատավարական գործողության հատկանիշ են համարում դրա իրականացումը դատարանի հսկողության ներքո: Քննարկվող դատավարական գործողության նկատմամբ դատական հսկողության հիմնախնդիրը չափազանց արդիական է համարվում:

Գործող ՔԴՕ-ն, ի տարբերություն 1964 թ. ՔԴՕ-ի, ՌԴ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների դատավարական օրենսգրքերի, դրույթ չի սահմանում այն մասին, որ դատարանը չի ընդունում հայցվորի հրաժարումը հայցից, եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է որևէ մեկի իրավունքներն ու օրինական շահերը: Օտարերկրյա նշված իրավական ակտերի, ինչպես նաև 1964 թ. ՔԴՕ-ի դրույթների ու դրանց կիրառման պրակտիկայի վերլուծության հիման վրա, հեղինակը գալիս է եզրահանգման, որ, որ թեև հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով, իսկ դատարանն էլ չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, այդուհանդերձ դատավարական օրենսդրությունը պետք է պարտավորեցնի դատարանին՝ հայցվորին պարզաբանելու կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվելու, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից:

Գործող օրենսդրությամբ այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց հարուցած սուբյեկտները գործով հանդես են գալիս հայցվորի կարգավիճակով: Որպես հետևանք, այն անձանց, որոնց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց է հարուցվել, կողմից հայցից հրաժարվելու վերաբերյալ դիրքորոշումը որևէ դատավարական նշանակություն ունենալ չի կարող: Հետևաբար էլ խնդիր է առաջանում համապատասխան անձին վարույթ ներգրավելու հնարավորության, նպատակահարմարության, նրա դատավարական կարգավիճակի, հայցից հրաժարվելու մասին նրա կամահայտնությունը հաշվի առնելու, նրա անունից հայց հարուցող սուբյեկտի կողմից հայցից հրաժարվելու հետևանքները պարզելու տեսանկյունից: Հասկանալի է, որ երեխան, որի շա-

հերի պաշտպանությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ներկայացվել է հայցը, վարույթի ընթացքում տնօրինչական գործողություններ կատարել չի կարող, իսկ նրա կամահայտնությունը տվյալ հարցում դատավարական արժեք չունի (նրա մոտ դատավարական գործունակության բացակայության պատճառով): Մինչդեռ այլ է իրավիճակը, երբ հասարակական կազմակերպություններն են հայց ներկայացնում դատարան իրենց անդամների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու համար (ՀԿ մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվ.): Նման պայմաններում վերջինիս հայցից հրաժարվելու իրավունք չվերապահելը, հեղինակի կարծիքով, ոչնչով արդարացված չէ, առավել ևս այն պայմաններում, երբ նրա շահերի պաշտպանությամբ հայց հարուցած ՀԿ-ը, որպես հայցվոր, նման իրավունքից օգտվում է:

Որոշակի առանձնահատկություններ ունեն անորոշ թվով անձանց իրավունքների պաշտպանությամբ հարուցված հայցերը, որոնք ևս հարուցվում են այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտների կողմից: Դրանց հիմնական առանձնահատկությունն էլ այն է, որ դատարանն օբյեկտիվորեն զրկված է հնարավոր շահագրգռված անձանց շրջանակը հստակ որոշելու հնարավորությունից: Ուստի նման գործերով հայցից հրաժարվելու հնարավորությունը պետք է բացառվի այն իրավիճակներում, երբ շահագրգռված անձը (անձինք), ում իրավունքների պաշտպանությամբ հայցը հարուցվել է, ինչ-ինչ պատճառներով (գործունակության բացակայություն, սուբյեկտների անորոշ շրջանակ և այլն) զրկված է (են) վարույթի կարճման հարցում կամահայտնություն արտահայտելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ անձը, ում իրավունքների պաշտպանությամբ հայցը հարուցվել է, ցանկություն և իրավական հնարավորություն ունի արտահայտելու վարույթը շարունակելու կամք (օրինակ՝ ՀԿ-ի անդամը), ապա առաջարկվում է, վարույթի կարճման հիմքում դնել ոչ թե հայց հարուցողի հրաժարումը հայցից, այլև տվյալ շահագրգռված անձի հստակ կամահայտնությունը՝ դատական պաշտպանությունից անվերապահորեն հրաժարվելու մասին: Առաջարկվող իրավակարգավորմանն էլ պետք է հավելել այն, որ դատարանին հարկ է վերապահել հնարավորություն շահագրգռված անձի հրաժարումը չընդունելու, եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և/կամ օրինական շահերը:

Որոշակի մտավախություններ է առաջացնում դատավարությանը խնամակալների և հոգաբարձուների կարգավիճակով մասնակցող անձանց կողմից հայցից հրաժարվելու ըստ էության անվերահսկելի հնարավորությունը: Հեղինակի կարծիքով խնդրի լավագույն լուծում կարող է համարվել խնամակալների և հոգաբարձուների տնօրինչական գործողությունների նկատմամբ ևս խնամակալության և հոգաբարձության մարմինների հսկողության սահմանումը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հայցն ընդունելը» վերտառությամբ, ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում հայցն ընդունելու դատավարական գործողության հատկանիշները, դրանց դատավարական կարգն ու հետևանքները:

ՔՂՕ 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Պատասխանողն իրավունք ունի ամբողջովին կամ մասնակիորեն ընդունել հայցը»:

Հատկանշական է, որ հայցն ընդունելու դատավարական կարգին և հետևանքներին օրենսդիրը որևէ այլ նորմի շրջանակներում չի անդրադառնում: Դատավարագիտության մեջ առկա բնորոշումների ընդհանրացումը թույլ է տալիս առանձնացնելու հայցն ընդունելու մի շարք հատկանիշներ, որոնք բնութագրում են տվյալ դատավարական գործողությունը:

Հայցի ընդունումը, ինչպես և հայցից հրաժարվելը, միակողմանի դատավարական գործողություն է: Հայցն ընդունելու պատասխանողի կամահայտնությունը կարող է արտահայտվել ինչպես դատարան ներկայացված դատավարական փաստաթղթում (օրինակ՝ հայցադիմումի պատասխանում, հակընդդեմ հայցում կամ ներկայացված դիմումում), այնպես էլ դատական նիստում արված բանավոր հայտարարության մեջ: Բոլոր դեպքերում նման կամահայտնությունը դատարանի մոտ առաջացնում է այն քննարկելու և դրա հետևանքները լուծելու պարտականություն:

Հայցի ընդունումը անվերապահ (անպայմանական) գործողություն է: Տնօրինչականության սկզբունքի ուժով պատասխանողը պարտավոր չէ դատարանին ներկայացնել, իսկ դատարանն էլ իրավունք չունի ստուգել հայցն ընդունելու շարժառիթները: Այդուհանդերձ, դատարանը պետք է հավաստիանա, որ հայցի ընդունումը պատասխանողի իրական և ոչ թե խաթարված կամքի արդյունք է, որը պայմանավորված չէ հայցվորի կողմից որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ որոշակի խոստումներով: Հայցի ընդունումը, ինչպես և հայցից հրաժարվելը, ունի որոշակի նպատակային ուղղվածություն: Տվյալ դատավարական գործողությունը միշտ ուղղված է հայցը բավարարող վճռի կայացմանը:

Ուշագրավ է, որ ՀՀ գործող ՔԴՕ-ն, պատասխանողին վերապահելով հայցի ընդունման իրավունք, դրա իրավական հետևանքներն ուղղակիորեն չի կարգավորում, ինչը, օրենսդրական բաց պետք է համարել:

Իրավակիրառական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության որ փուլում պատասխանողը կարող է ընդունել հայցը: Ի տարբերություն հայցից հրաժարվելու՝ հայցն ընդունելու վերաբերյալ օրենսդիրը ՔԴՕ 32-րդ հոդվածի 2-րդ մասում անհասկանալի պատճառներով որևէ սահմանափակում չի նախատեսել, և տպավորություն է ստեղծվում, թե հայցը կարող է ընդունվել դատավարության ցանկացած փուլում: Ըստ հեղինակի, պատասխանողին օրենքով պետք է վերապահվի մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննությունն ավարտվելը հայցն ընդունելու հնարավորություն՝ այն նույն նկատառումներով, որոնցով մինչև այդ պահը հայցից հրաժարվելու իրավունք է վերապահվել հայցվորին:

Ի լրումն հայցից հրաժարվելու նկատմամբ դատական վերահսկողությունը վերականգնելու վերաբերյալ շարադրված նկատառումների, հեղինակը նշում է, որ հայցի ընդունումը դատավարական հետևանքների առումով էապես տարբերվում է հայցից հրաժարվելուց, ինչն անխուսափելիորեն էլ ավելի է մեծացնում քննարկվող դատավարական գործողության նկատմամբ դատական վերահսկողություն նախատեսելու անհրաժեշտությունը: Եթե հայցից հրաժարվելու դեպքում գործի վարույթն ավարտվում է առանց վեճն ըստ էության լուծելու, ապա հայցն ընդունելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում ոչ թե գործի վարույթը կարճելու, այլ հայցը բավարարելու մասին, որի արդյունքում վեճն ըստ էության լուծվում է, իսկ պատասխանողի պարտականությունները ենթակա են դառնում հարկադիր կատարման: Կարծիք է արտահայտվում, ըստ որի տվյալ խնդիրը կարող է լիովին լուծված համարվել, եթե ՔԴՕ-ում ուղղակիորեն սահմանվի, որ դատարանը մերժում է հայցի ընդունումը, եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Հայցի փոփոխումը» վերտառությամբ, ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում հայցի փոփոխման դատավարական գործողության հատկանիշները, դրանց դատավարական կարգն ու

հետևանքները:

Հայցի տարրերի էության վերաբերյալ գիտական մոտեցումների ամփոփման և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային ակտերում արտահայտված դիրքորոշումների վերլուծության հիման վրա հեղինակը գալիս է եզրահանգման, որ հայցի առարկան հայցվորի կողմից դատական կարգով պատասխանողին ներկայացվող նյութաիրավական այն պահանջների ամբողջությունն է, որոնք բխում են վիճելի իրավահարաբերությունից և իրենց մեջ ներառում են պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը (օրինական շահը) և իրավունքի պաշտպանության հայցվող եղանակները: Ընդ որում, պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը (օրինական շահը) դիտարկվում է որպես հայցի առարկայի բաղադրատարր, որի բացակայության պայմաններում անհնար է անհատականացնել հայցը, պարզել թե ինչ է հայցվորը պահանջում պատասխանողից: ՔԴՕ-ի նորմերով նախատեսված «հայցի էություն» կատեգորիան մեծապես պայմանավորելով ըստ հայցվորի խախտված և պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքով (օրինական շահով), հեղինակը եզրահանգում է, որ հայցի առարկայի փոփոխությունը կարող է վերաբերել բացառապես իրավունքի պաշտպանության հայցվող եղանակին, այ ոչ այն սուբյեկտիվ իրավունքին, որի պաշտպանությունը հայցվում է, քանի որ վերջինիս փոփոխությունը ցանկացած դեպքում հանգեցնում է հայցի էության փոփոխության: Ըստ այդմ, որպես հայցի առարկայի որակական փոփոխության հնարավոր տարբերակներ դիտարկվում են՝ 1) իրավունքի պաշտպանության մի եղանակը մեկ այլ եղանակով փոխարինելը և 2) իրավունքի պաշտպանության եղանակների շրջանակը ճշգրտելը՝ դրանք ավելացնելով կամ պակասեցնելով:

Հայցի առարկայի փոփոխությունը իրավունքի պաշտպանության մի եղանակը մեկ այլ եղանակով փոխարինելու միջոցով հնարավոր է, առաջին հերթին, այնպիսի պահանջներով, որոնք, ըստ նյութական օրենսդրության, այլընտրանքային են: Նշվածը, սակայն, ըստ հեղինակի, չի նշանակում, որ այն դեպքերում, երբ նյութական օրենսդրությունը պաշտպանության այլընտրանքային եղանակներ չի նախատեսում, սկզբնապես ներկայացված հայցով պաշտպանության եղանակը չի կարող փոփոխվել այլ եղանակով: Նման փոփոխությունը կրկին հնարավոր է, եթե դա չի հանգեցնում պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի փոփոխման: Այլընտրանքային պահանջով (իրավունքի պաշտպանության եղանակով) վեճի վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի, արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման առկայությունը հայցվորին զրկում է նույնական պահանջով նույն անձի դեմ միևնույն հիմքերով դատարան դիմելու հնարավորությունից:

Մինչդեռ ոչ այլընտրանքային պաշտպանության եղանակով հայցի վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի, արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման առկայությունը հայցվորին չի զրկում օրենքով նախատեսված պատշաճ պաշտպանության եղանակը հետագայում մեկ այլ հայցի շրջանակներում հայցելու հնարավորությունից:

Հայցի առարկան կարող է փոփոխվել նաև սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության եղանակների շրջանակը ճշգրտելով՝ դրանք ավելացնելով կամ պակասեցնելով: Տվյալ դեպքում խոսքը պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջն իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված այլ եղանակներով լրացնելու կամ սկզբնապես հայցված պաշտպանության եղանակների մի մասից հրաժարվելու մասին է:

Հայցի առարկայի փոփոխությունը, մասնավորապես՝ դրա նեղացումը, չի կարող նույնացվել հայցից մասնակիորեն հրաժարվելու հետ: Այդ կապակցությամբ

ՀՀ ՎՃՌաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ հայցի առարկան փոփոխելը՝ դրանից որոշակի պահանջներ հանելու եղանակով չի կարող գնահատվել որպես տվյալ հայցապահանջից հրաժարում:

Դատավարագետները հայցապահանջների չափի ավելացման և նվազեցման հարցի քննարկման ժամանակ ուշադրության առարկա են դարձնում պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքի օբյեկտը՝ այն նյութական կամ ոչ նյութական բարիքները, որոնց կապակցությամբ ծագել է վեճը: Այդ օբյեկտները հաճախ դիտարկվում են որպես վեճի առարկա: Բնականաբար վիճելի իրավահարաբերության նյութական կամ ոչ նյութական օբյեկտի փոխարինումը մեկ այլ օբյեկտով ինքնաբերաբար հանգեցնում է հայցի էության փոփոխության, քանի որ արդյունքում փոխվում է այն սուբյեկտիվ իրավունքը, որի պաշտպանության նպատակով ներկայացվել է հայցը: Այս տեսանկյունից նման եղանակով հայցի որակական փոփոխությունն անթույլատրելի է:

Հայցվորն իրավունք ունի փոփոխել նաև հայցի հիմքը: Հայցի հիմքի էության, դրա բաղադրատարրերի վերաբերյալ գիտական մոտեցումների ամփոփման և ՀՀ ՎՃՌաբեկ դատարանի նախադեպային ակտերում արտահայտված դիրքորոշումների վերլուծության հիման վրա հեղինակը գալիս է եզրահանգման, հայցի հիմքի փոփոխությունն պետք է համարել ոչ թե դրա իրավական, այլ փաստական հիմքի փոփոխությունը, թեկուզև այն կարող է ինքնաբերաբար հանգեցնել հայցի նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերի շրջանակի փոփոխության:

Իրավակիրառական և տեսական կարևոր նշանակություն ունի հայցի առարկայի և հիմքի միաժամանակյա փոփոխության հնարավորության հարցը: Վերջինս միանշանակ պատասխան չի ստացել ո՛չ գործող ՔԴՕ-ի նորմերում, ո՛չ դատական պրակտիկայում և ո՛չ էլ դատավարագիտության մեջ: Հեղինակի կարծիքով, ՔԴՕ-ով նպատակահարմար է նախատեսել հայցի առարկա և հիմքը միաժամանակ փոփոխելու հնարավորությունը՝ պայմանով, որ նման փոփոխության արդյունքում չի փոխարինվում այն սուբյեկտիվ իրավունքը կամ օբյեկտով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով սկզբնական հայցը հարուցվել է:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Հաշտության համաձայնությունը» վերտառությամբ, ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում հաշտության համաձայնության որպես տնօրինչական դատավարական գործողության հատկանիշները, դրա կայացման դատավարական կարգն ու հետևանքները:

Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքն առավել ցայտուն արտահայտվում է դատարանի վարույթում գտնվող վեճը հաշտության համաձայնությամբ ավարտելու կողմերին վերապահված հնարավորության մեջ:

Աշխատանքի շրջանակներում առաջարկվում է հաշտության համաձայնությունը դիտարկել որպես գործին մասնակցող անձանց միջև կնքվող և դատարանի կողմից հաստատվող պայմանագիր, որն ուղղված է փոխադարձ զիջումների և կողմերի անվիճելի իրավունքներն ու պարտականությունները սահմանելու ճանապարհով վեճը լուծելուն և գործի վարույթը կարճելուն: Գործող ՔԴՕ-ի, ՀՀ-ում ձևավորված դատական պրակտիկայի և տեսական գաղափարների վերլուծությունն ու ընդհանրացումը թույլ է տալիս առանձնացնել հաշտության համաձայնության հետևյալ հատկանիշները:

Հաշտության համաձայնության ինստիտուտը հետազոտող գիտնականները միանշանակ մոտեցում չունեն այն հարցում, թե արդյո՞ք հաշտության համաձայնության կնքմամբ տնօրինվում են նյութական իրավունքները: Ի տարբերություն

հայցից հրաժարվելու, հաշտության համաձայնության կնքմամբ վիճելի նյութական իրավահարաբերությունը բոլոր դեպքերում դադարում է՝ տրասֆորմացվելով այլ անվիճելի իրավահարաբերության, կամ փոփոխվում է:

Հաշտության համաձայնության կնքման դատավարական նպատակը դատարանի վարույթում գտնվող գործի վարույթը կարճելն է: Տվյալ հատկանիշի ուժով հաշտության համաձայնությունը տարբերվում է այն արտադատական քաղաքացիաիրավական պայմանագրերից, որոնց կնքմամբ կողմերը փոփոխում կամ դադարեցնում են իրենց միջև ծագած վիճելի պարտավորությունները, ստանձնում են նոր պարտավորություններ և այլն՝ առանց փոխադարձ կամահայտնությամբ այն դատարանի հաստատմանը ներկայացնելու:

Դատավարական գրականության մեջ, որպես հաշտության համաձայնության կարևոր հատկանիշ, ընդգծվում է կողմերի հնարավորությունը հաշտվելու վիճելի իրավահարաբերության շրջանակներում, որոնք հաճախ դիտարկվում են որպես հաշտության համաձայնության սահմաններ: Հեղինակը համակարծիք է այն հեղինակների դիրքորոշման հետ, ըստ որոնց հաշտության համաձայնությամբ վիճելի իրավահարաբերության դադարում նորացմամբ տեղի ունենալ չի կարող, եթե այդպիսի նորացումն արգելված է օրենքով:

Իրավական անորոշությունը բացառելու նկատառումներից ելնելով՝ դատարանն իր ակտով պետք է հաստատի բացառապես այնպիսի հաշտության համաձայնություն, որը որոշակի է, այսինքն՝ հստակ սահմանում է կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների շրջանակը և վերջիններիս կատարման հստակ եղանակն ու կարգը:

Միևնույն ժամանակ հաշտության համաձայնությունը պետք է լինի անպայմանական: Դրա մեջ չեն կարող պայմաններ նշվել, որոնցից կախման մեջ է դրվում մյուս կողմի պարտականությունների կատարումը:

Եզրակացություններում ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

1. Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ դատավարագիտության մեջ տնօրինչականության սկզբունքի հասկացության բազմաթիվ տեսական բնորոշումների, տնօրինչականության էության ու բովանդակության վերաբերյալ հաճախ իրարամերժ մոտեցումների առկայության պայմաններում, նպատակահարմար է գերծ մնալ քննարկվող սկզբունքի հասկացությունն օրենսդրության մեջ ներառելուց, այն նույն նկատառումներով, որոնցով քաղաքացիական դատավարության օրենսգրքում չեն սահմանվել «իրավաբանական փաստ», «հայց», «ապացուցման բեռ» և մի շարք այլ եզրույթների հասկացությունը: Ի տարբերություն մի շարք դատավարագետների, որոնց կարծիքով իրավունքի առանձին նորմով չամրագրված սկզբունքն իրավունքի սկզբունք համարվել չի կարող, և որպեսզի տնօրինչականության սկզբունքը չվերածվի բացառապես դոկտրինայի մակարդակում գոյություն ունեցող իրավական գաղափարի, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նրա հասկացությունը (Մ.Ա. Գուրվիչ, Ն.Ա. Չեչինա, Ս.Ա. Սապոժնիկով, Ե.Ռ. Ռուսինովա և այլն), կարծիք է արտահայտվել, որ տնօրինչականության սկզբունքը, ուղղակիորեն նախատեսված չլինելով ՔԴՕ-ի նորմերով, այդուհանդերձ, ունի նորմատիվային բնույթ: Իրավունքի սկզբունքները, որոնց թվին քաղաքացիական դատավարությունում անառարկելիորեն դասվում է նաև տնօրինչականությունը, որպես հիմնարար նշանակություն ունեցող իրավական գաղափարներ, առանցքային ելակետային հիմունքներ կարող են դրվել իրավունքի տվյալ ճյուղի հիմքում՝ ուղղակիորեն չարտացոլվելով իրավունքի մեկ կոնկրետ նորմում:

և բխելով մի շարք իրավանորմերի բովանդակությունից:

2. Դատավարական օրենսդրությամբ հարկ է հստակ կարգավորել հայցն ընդունելու դատավարական կարգը և հետևանքները՝ նախատեսելով հետևյալ բովանդակությամբ հոդված.

«1. Մինչև առաջին ատյանի դատարանի կողմից գործով դատաքննությունն ավարտելը պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունել հայցերը:

2. Հայցի ընդունումը դատարանի կողմից մերժվում է (ճանաչվում է ոչ իրավաչափ), եթե հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ հիմքեր կան կասկածելու, որ տվյալ դատավարական գործողությունը կատարվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո կամ որոշակի պայմանով (վերապահումով):

3. Նախքան հայցի ընդունումն իրավաչափ ճանաչելը դատարանը պարտավոր է պատասխանողին բացատրել հայցի ընդունման դատավարական հետևանքները:

4. Եթե պատասխանողն ամբողջությամբ ընդունում է հայցը, դատարանը գործով դատաքննությունը հայտարարում է ավարտված և անցնում է հայցը բավարարող վճռի կայացման:

5. Եթե պատասխանողը հայցն ամբողջությամբ ընդունում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, դատարանն իրավունք ունի նախնական դատական նիստում հայցը ճանաչել ակնհայտորեն հիմնավորված և, առանց գործը դատաքննության նշանակելու, որոշում կայացնել արագացված դատաքննություն կիրառելու մասին:

6. Եթե պատասխանողը մասնակիորեն է ընդունում հայցը, ապա դատարանն ընդունված պահանջների մասով դատաքննությունը հայտարարում է ավարտված՝ դատաքննությունը շարունակելով այն պահանջների մասով, որոնք պատասխանողի կողմից չեն ընդունվել: Ընդունված պահանջների մասով հայցը ենթակա է բավարարման»:

3. Հայցի փոփոխման իրավունքը պատկանում է բացառապես հայցվորին: Դատարանն իր նախաձեռնությամբ, առանց հայցվորի համաձայնության, ընդհանուր կանոնի համաձայն, չի կարող քննարկել նրա կողմից պատասխանողին չներկայացված պահանջներ, հետազոտել փաստական հանգամանքներ, որոնք որևէ կերպ կապված չեն հայցվորի կողմից հայցի հիմքում դրված հանգամանքների հետ, ինչպես նաև ավելացնել կամ նվազեցնել հայցապահանջների չափը: Սակայն, նկատի ունենալով, որ գործող դատավարական և նյութական օրենսդրություններն առանձին դեպքերում դատարանին պարտավորեցնում են դուրս գալու հայցապահանջների սահմաններից, ճիշտ կլինի ՔԴՕ-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթով. «Դատարանը գործը քննում է ներկայացված հայցապահանջների շրջանակներում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

4. Հայցը փոփոխելու իրավունքի հետ մեկտեղ հայցվորին նպատակահարմար է վերապահել գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում նույն գործի շրջանակներում սկզբնական հայցի հետ փոխկապակցված հայց ներկայացնելու (հայցերի օբյեկտիվ միացում կատարելու) իրավունք: Հայցվորի կողմից հայցերի օբյեկտիվ միացում կատարելը չի կարելի դիտարկել որպես հայցի առարկայի փոփոխություն, քանի որ վարույթի ընթացքում այլ, թեկուզև սկզբնականի հետ փոխկապակցված իրավունքի պաշտպանության նպատակով ներկայացված պահանջը ոչ թե որակական փոփոխության է ենթարկվում հայցադիմումի շրջանակ-

ներում ներկայացված հայցապահանջը, այլ հանդես է գալիս որպես ինքնուրույն, իր հիմքերն ունեցող հայցի առարկա, որը, իր հերթին, կարող է փոփոխության առարկա հանդիսանալ:

5. Հայցի փոփոխման տնօրինչական գործողության կատարման և ձևակերպման պատշաճ իրավական կարգավորումն ապահովելու նպատակով, ըստ հեղինակի, նպատակահարմար կլինի ՔԴՕ 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունն ուժը կորցրած ճանաչել, իսկ 149.7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 149.7. Հայցը փոփոխելը

1. *Հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի առարկան և հիմքը, ավելացնելու կամ նվազեցնելու հայցապահանջների չափը մինչև գործը դատաքննության նշանակելը:*

2. *Հայցվորը հայցի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն, որը քննարկվում է նախնական դատական նիստում:*

3. *Դատարանը հայցի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում:*

4. *Դատարանը մերժում է հայցի փոփոխությունը թույլատրելու միջնորդությունը, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալիս դատարանի առարկայական ընդդատության սահմաններից:*

5. *Պատասխանողը հայցի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո սույն օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում կարող է ներկայացնել հայցադիմումի նոր պատասխան:*

6. *Հայցի փոփոխությունը թույլատրելու դեպքում նախնական դատական նիստը վերսկսվում է»:*

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Տնօրինչականության սկզբունքի հասկացությունը և էությունը քաղաքացիական դատավարությունում. Դատական իշխանություն, Եր., 2010, թիվ 6 (131), 30-40 էջեր,

2. Հայցի ընդունումը տնօրինչական գործողությունների համակարգում. Պետություն և իրավունք, Եր., 2013, թիվ 4 (62), 65-74 էջեր,

3. Քաղաքացիական դատավարությունում հայցից հրաժարվելու տնօրինչական գործողության նկատմամբ դատական հսկողության հիմնախնդիրը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2014, 124-137 էջեր,

4. Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում. Դատական իշխանություն, Եր., 2014, թիվ 3 (177), 14-24 էջեր,

5. Հայցի առարկան փոփոխելու հասկացությունը և եղանակները քաղաքացիական դատավարությունում. Դատական իշխանություն, Եր., 2014, թիվ 6 (180), 58-68 էջեր,

6. Քաղաքացիական դատավարությունում հայցի առարկան և հիմքը միաժամանակ փոփոխելը որպես անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիք. Սահմանադրական դատարան, տեղեկագիր, Եր., 2014, թիվ 3/73, 15-21 էջեր:

7. Հայցի հիմքի փոփոխման հիմնախնդիրը քաղաքացիական դատավարությունում. Դատական իշխանություն, Եր., 2014, թիվ 10-11 (180-185), 67-73 էջեր:

РЕЗЮМЕ

Есяян Вардуш

ПРИНЦИП ДИСПОЗИТИВНОСТИ И РАСПОРЯДИТЕЛЬНЫЕ ДЕЙСТВИЯ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Диссертационное исследование посвящено актуальным проблемам гражданско-процессуальной диспозитивности и правового регулирования распорядительных процессуальных действий в гражданском процессе Республики Армения.

Целью исследования явилось комплексное изучение теоретических и практических вопросов, связанных с реализацией гражданско- процессуального принципа диспозитивности и совершением распорядительных действий в гражданском процессе Республики Армения, и разработка рекомендаций по совершенствованию законодательства и правоприменительной практики.

Научная новизна исследования заключается в том, что впервые в армянской юриспруденции по возможности комплексно и разносторонне проанализированы сущность и содержание гражданско-процессуального принципа диспозитивности, сущность и место распорядительных прав в системе процессуальных прав сторон, процессуальные институты, связанные с совершением распорядительных действий, с учетом как встречающихся в процессуальной науке концепций, так и сформировавшейся правоприменительной практики.

На основании изучения и обобщения сформировавшихся в науке гражданского процессуального права теорий и позиций относительно сущности и содержания процессуального принципа диспозитивности, и сопоставительного анализа отдельных норм действующего гражданского процессуального кодекса РА автором предлагается определять принцип диспозитивности как основополагающее и руководящее положение, в силу которого в предусмотренных законом случаях и порядке деятельность суда обуславливается действиями, совершающимися по инициативе и волеизъявлению юридически заинтересованных в исходе данного дела лиц, и который предоставляет участвующим в деле лицам возможность определить в ходе процесса предмет судебной защиты и повлиять на ход и направленность процесса.

Автор приходит к выводу, что принцип диспозитивности обеспечивает сторонам возможность выбрать наиболее эффективные способы защиты их нарушенных или оспариваемых прав и законных интересов, либо вообще отказаться от их судебной защиты. Будучи основанным на беспрепятственном осуществлении права на судебную защиту субъективных прав, свобод и законных интересов и на конституционных праве на использование

эффективных средств правовой защиты, принцип диспозитивности обеспечивает для сторон процесса возможность выбора наиболее эффективного способа защиты нарушенных или оспариваемых прав и законных интересов либо возможность вообще отказаться от их судебной защиты.

Диспозитивность рассматривается автором как принципиальная основа наделения сторон правом на совершение распорядительных действий, определяющих ход и направленность производства по делу. Обосновывается точка зрения о том, что содержание процессуальной диспозитивности составляют те процессуальные права, реализация которых в уже начатом процессе приводит к распоряжению правом на судебную защиту и средствами их защиты, определяя ход и направленность производства по данному делу. Аргументируется позиция, что к числу таких процессуальных действий распорядительного характера относятся отказ от иска, признание иска, изменение предмета или основания иска, увеличение или уменьшение размеров исковых требований, заключение мирового соглашения.

На основании результатов проведенного исследования в рамках диссертационной работы делаются теоретические выводы, предлагаются решения по ряду возникших в науке и судебной практике спорных вопросов, обозначаются пути совершенствования законодательных положений гражданского процессуального кодекса, регулирующих распорядительные действия сторон.

Теоретическое значение исследования, проведенного в рамках диссертационной работы, в первую очередь обусловлено тем, что в армянской юриспруденции оно является первой комплексной работой, посвященной изучению принципа диспозитивности гражданского процессуального права и являющихся отдельными проявлениями его действия распорядительных действий, которая может быть использована в дальнейших научных исследованиях по данной теме, а также в процессе преподавания гражданского судопроизводства, ряда других специальных курсов, а также при подготовке учебных пособий.

Сделанные в работе предложения по совершенствованию законодательства, обобщения судебной практики, разработанные рекомендации и их обоснования могут быть использованы также в процессе правотворческой деятельности, способствовать совершенствованию судебной практики и быть полезными в процессе разработки прецедентных актов, направленных на единообразное применение закона.

RESUME

Yesayan Vardush

DISPOSITIVENESS PRINCIPLE AND OPTIONAL ACTIONS IN THE CIVIL PROCEDURE

The present dissertation is devoted to the actual problems of civil-procedural dispositiveness and legal regulation of optional procedural actions in the civil procedure of the Republic of Armenia.

The study aims at complex examination of theoretical and practical issues of realization of civil-procedural principle of dispositiveness and making optional actions, as well as elaboration of recommendations for development of the legislation and law-enforcement practice.

The scientific novel of the study is that for the first time in the Armenian jurisprudence the essence and content of the civil-procedural principle of dispositiveness, the essence and role of optional rights in the system of the parties' procedural rights, procedural institutions linked to making optional actions are analyzed complexly and thoroughly to the extent possible. Both the known concepts known in the procedural science and the formed law-enforcement practice are considered within the study.

Based on examination and summary of the theories elaborated in the science of civil procedure and positions concerning the essence and content of the procedural principle of dispositiveness as well as comparative analysis of existing norms of the Civil-procedural Code of RA, the author proposes to define the dispositiveness principle as a fundamental and guiding provision by virtue of which the court proceedings in cases and order stipulated by law are conditioned by actions undertaken by initiative and will persons legally interested in the outcome of the case, and which enables the persons participating in the case to define the subject of the court protection during the process and to influence the progress and the direction of the procedure.

The author comes to the conclusion that the dispositiveness principle ensures for the parties the possibility to choose the most effective means of protection of their infringed or argued rights or to refuse judicial protection at all. Being based on the unimpeded enjoyment of the right to court protection of subjective rights, freedoms, legal interests and the constitutional principle of using effective means of legal protection, the dispositiveness principle ensures for the parties of the proceedings the possibility to choose the most effective means of protection of their infringed or argued rights or to refuse judicial protection at all.

Dispositiveness is considered by the author as a principal ground for granting the parties with the right to optional actions, preconditioning the progress and direction of the case proceedings. The point of view is substantiated that the content of the procedural dispositiveness consists of those procedural rights realization of which brings to enjoyment of the right to judicial protection and means of their protection, predicting the progress and direction of the proceeding of the given case. The position is argued that the list of procedural actions of optional nature includes refusal of the action, increasing or decreasing the size of demand, signing an amicable agreement.

Based on the results of the study conducted within the dissertation theoretical conclusions are drawn up, solutions are recommended for a range of debatable issues arising in the science and judicial practice, prospects are identified for improvement of provisions of the Civil-procedural code of RA, regulating the optional actions of the parties.

The theoretical importance of the study, conducted within the dissertation, first of all is conditioned by the fact that it is the first complex examination in the Armenian jurisprudence devoted to scrutinizing the principle of dispositiveness of the civil procedural law and optional actions constituting its separate exertions, which can be useful for future studies on this topic as well as in the course of teaching civil procedural law, for a range of special courses and preparation of tutorials.

Suggestions for development of the legislation made within the study, summaries of the judicial practice, recommendations and their substantiations elaborated can be used also in the course of lawmaking process, promote the enhancement of the judicial practice and be helpful for drafting precedential acts aimed at unified application of the law.